ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» դեկտեմբերի 2021թ. № 430

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 85 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 406, 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 408 ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 412 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով «Տարոն Սերոբյան» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006WJXROXV), Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-07122021-06-0199 որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել 06-006-0490-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը՝ 0,12714 հեկտար մակերեսով:

2. Սպիտակի քաղաքապետի 2008 թվականի ապրիլի 14-ի «Սպիտակ քաղաքի բնակիչ Ստասիկ Գրիգորի Պողոսյանի տնամերձ հողամասը որպես վերջինիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 85 որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) որոշման վերնագրում նշված «տնամերձ հողամասը» բառերը փոխարինել «անշարժ գույքը» բառերով.

2) որոշման 1-ին կետում գրված «9ա» թիվը փոխարինել «9/1» թվերով, «0,1269» թիվը փոխարինել «0,12714» թվով, «622,1» թիվը փոխարինել «728,1» թվով:

3. Սպիտակի քաղաքապետի 2008 թվականի ապրիլի 14-ի «Սպիտակ քաղաքի բնակիչ Ստասիկ Գրիգորի Պողոսյանի տնամերձ հողամասը որպես վերջինիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 85 որոշման մեջ կատարել լրացումներ.

1) որոշման նախաբանը «վերահաստատելու հետ,» բառերից հետո լրացնել «հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1976, 1988, 1989, 1990 թվականներին կառուցված բնակելի տունը, բաց պատշգամբը, նկուղը, կաթսայատունը, ջերմոցը, անասնաշենքը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը» թվերով և բառերով.

2) որոշման 1-ին կետում «շինությունները» բառից հետո լրացնել «բութ» կետադրական նշանը և «8,20 քառակուսի մետր մակերեսով նկուղը, 203,5 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 41,2 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բաց պատշգամբը, 8,0 քառակուսի մետր մակերեսով կաթսայատունը, 446,5 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ջերմոցը և 20,7 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը» թվերը և բառերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք.Սպիտակ, Այգեստան փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 9/1» հասցեն (փոստային դասիչ՝ 1802):

5. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 1-ի «Սպիտակի քաղաքապետի 2008 թվականի ապրիլի 14-ի թիվ 85 որոշման մեջ փոփոխություններ կատարելու, հողամասի ճշգրտված հատակագիծը հաստատելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 406, Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 2-ի «Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 406 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 408 և Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի «Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 406 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 412 որոշումները:

6. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները, լրացումները և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 20
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» դեկտեմբերի 2021թ. № 431 - Ա

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼՐԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառնական դասակարգման «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածից Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ Սպիտակի համայնքապետարանի աշխատողներին վճարել լրավճար՝ համաձայն հավելվածի:

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 22
ք. Սպիտակ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարի
2021 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 431 որոշման

ՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Ազգանուն, անուն	Զբաղեցրած պաշտոնը	Լրավճարի չափը /ՀՀ դրամ/
1	Նիկողոսյան Քաջայր	Համայնքի ղեկավար	430 000
2	Արտակ Մաթոսյան	Համայնքի ղեկավարի տեղակալ	340 000
3	Ազգանուշ Ֆրանգյան	Աշխատակազմի քարտուղար	340 000
4	Խաչատրյան Էռնեստ	Համայնքի ղեկավարի խորհրդական	280 000
5	Պետրոսյան Քնարիկ	Համայնքի ղեկավարի օգնական	120 000
6	Յարմալոյան Նորայր	Աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան	180 000
7	Թումանյան Արմինե	Աշխատակազմի գլխավոր մասնագետի ժ/պ	180 000
8	Արշակյան Արմինե	Աշխատակազմի առաջատար մասնագետ	120 000
9	Դանիելյան Մելանյա	Աշխատակազմի առաջատար մասնագետ	120 000
10	Սարգսյան Սիրանուշ	Քարտուղարության բաժնի առաջատար մասնագետ	120 000
11	Մնոյան Հասմիկ	Քարտուղարության բաժնի առաջատար մասնագետ	120 000
12	Ապրեսյան Վարուժան	Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետի ժ/պ	260 000
13	Օհանյան Լուսինե	Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահ	180 000
14	Ավետիսյան Արսեն	Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ-գնումների համակարգող	180 000
15	Խաչատրյան Սուսաննա	Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ	180 000
16	Պողոսյան Ալլա	Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի առաջատար մասնագետի ժ/պ	120 000
17	Գասպարյան Լիաննա	Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի առաջատար մասնագետի ժ/պ	120 000
18	Շիրոյան Անուշ	Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ	120 000

19	Թորոսյան Էդգար	Քաղաքաշինության,հողօգտագործման,կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ	260 000
20	Չոբանյան Գայանե	Քաղաքաշինության,հողօգտագործման,կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալի ժ/պ	225 000
21	Դարչինյան Արամ	Քաղաքաշինության,հողօգտագործման,կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ	120 000
22	Թումանյան Գայանե	Քաղաքաշինության,հողօգտագործման,կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ	120 000
23	Մաթոսյան Հայկուհի	Աշխատակազմի գործավար	120 000
24	Մաթոսյան Վահե	Ցանցային ադմինիստրատոր	100 000
25	Ղազարյան Միեր	Ավտովարորդ	140 000
26	Դանիելյան Սերգեյ	Տնտեսվար	110 000
27	Կիրակոսյան Սեդա	Հավաքարար	76 500
28	Մելիքյան Գոհար	Հավաքարար	76 500
29	Սամվելյան Հայկ	Էլեկտրիկ	102 000
30	Գրիգորյան Հենրիկ	Պահակ	88 312
31	Բասմաջյան Գագիկ	Պահակ	88 312
32	Սահակյան Վահե	Պահակ	91 276

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» դեկտեմբերի 2021թ. № 432

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի բնակիչների դիմումները և սոցիալական հարցերի հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 9 արձանագրությունը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Այլ սոցիալական ծրագրեր» գործառական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից Սպիտակ համայնքի բնակիչներին հատկացնել դրամական օգնություն ընդամենը 240 000 (երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 24
ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2021թ. դեկտեմբերի «24» թիվ 432 որոշման

Դրամական օգնություն ստացող քաղաքացիների ցուցակ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Սոց. քարտի համարը	Անձնագրային տվյալները	Գումարը ՀՀ դրամ
1	Նարինե Հարությունյան	5505660290	AR0360855, տրված 06.07.2017թ., 052-ի կողմից	15 000
2	Մերուժան Սողոմոնյան	1710630370	AS0345729, տրված 22.08.2018թ., 052-ի կողմից	20 000
3	Մարիամ Այվազյան	5409810074	AS0614911, տրված 20.05.2019թ., 052-ի կողմից	15 000
[illegible]	Ֆենյա Պետրոսյան	6412770313	AU0477385, տրված 29.10.2021թ., 052-ի կողմից	15 000
5	Ալվարդ Մաթոսյան	5211550056	AP0538668, տրված 15.08.2016թ., 052-ի կողմից	20 000
6	Շողիկ Հովհաննիսյան	5212430044	AP0591483, տրված 05.10.2016թ., 052-ի կողմից	20 000
7	Վարդիթեր Միքաելյան	6005580426	AM0887065, տրված 02.10.2021թ., 052-ի կողմից	20 000
8	Գայանե Թորոսյան	5202930097	012835690, տրված 16.06.2020թ. 052-ի կողմից	20 000
9	Անուշ Ղարիբյան	5508570349	001211259, տրված 01.02.2014թ. 052-ի կողմից	20 000
10	Ժենյա Ղազարյան	6009500230	00362058, տրված 31.01.2018թ. 052-ի կողմից	15 000
11	Փիլթոյան Աիդա	8009720178	AU0232270, տրված 23.04.2021թ., 052-ի կողմից	15 000
12	Սիմոն Դանիելյան	139470049	AT0324702, տրված 09.12.2019թ., 052-ի կողմից	15 000
13	Օքսաննա Աղաբաբյան	5511850624	AT0688082, տրված 04.03.2021թ., 052-ի կողմից	15 000
14	Վալյա Վանյան	6424040153	007698632, տրված 18.03.2016թ., 052-ի կողմից	15 000

Ընդամենը՝ 240 000 (երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» դեկտեմբերի 2021 թվականի № 433

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՀԱՅԱՍՏԱՆ ՕՆԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստան Սահակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի դեկտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարաձորի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-1) Հայաստան Օնիկի Սահակյանին ազատել համայնքային ծառայության զբաղեցրած պաշտոնից:

2. Աշխատանքային հարաբերությունների ավարտը համարել 2021 թվականի դեկտեմբերի 26-ը:

3.Սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ և վճարել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ.դեկտեմբերի 24
ք. Սպիտակ